ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 19 » մայիսի 2020 թվականի N: 145-Ա ք.Գյումրի

ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N:224-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի հունվարի 26-ի N:24-Ն որոշման N 1 հավելվածի 60-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 19-ի N:3 որոշումը և Սոնա Հովհաննիսյանի 2020 թվականի մայիսի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սոնա Հովհաննիսյանին 2020 թվականի մայիսի 20-ից նշանակել «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

2. 2020 թվականի մայիսի 20-ից դադարեցնել Սոնա Հովհաննիսյանի՝ «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝